ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ԱՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Սեպտեմբերի 28-ին՝ Վարագա Ս. Խաչի փոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով, Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Հայ Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը: Սրբազան Հոր հետ Մայր Աթոռ էին եկել նաև վեց փասնյակից ավելի ուխտավորներ, թեմական խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ:

Պատարագի ընթացքին հանուն Ամենայն Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ուխտավորներին ողջունեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ապա քարոզեց Խաժակ Սրբազանը (տե՛ս էջ 35-37): Իր պատգամը հղելով ներկաներին, Սրբազան Հայրը մասնավորապես նշեց. «Մենք այսօր ԱՄՆ-ից եկել ենք Ուխտի այս Սուրբ և Անմահ Պատարագով ինքներս մեզ նորոգելու, Վեհափառ Հայրապետի Աջը համբուրելու և Էջմիածնի խորհրդով վերանորոգված վերադառնալու Ամերիկա՝ մեր կյանքը շարունակելու որպես Հայ Եկեղեցու հավատավոր զավակներ»:

Ս. Պատարագի ավարտին Նորին Սրբությունն ընդունեց ԱՄՆ Արևելյան թեմից եկած ուխտավորներին՝ Խաժակ Սրբազանի առաջնորդությամբ:

* * *

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ս. Պատարագից հետո, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց մասնավոր հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 2003 թ. օգոստոսի 19-ին Բաղդադի ՄԱԿ-ի գրասենյակում կատարված ահաբեկչական պայթյունի զոհերի:

Ս. Պատարագին և հոգեհանգստյան պաշտոնին ներկա էին Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ: Հավարտ Ս. Պատարագի դիվանագետներին Վեհարանում ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետը: